ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

26.12.2016 թ.
Ելք 046/121
Lusaghbyur.lori@mta.gov.am ,
հեռ. 093-34-47-89

<< Լոռու մարզպետ
պարոն՝ Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն մարզպետ՝

Ձեզ ենք ներկայացնում Լոռու մարզի Լուսաղբյուր համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 40-Ն որոշումը:

Առդիր 17 էջ

Լուսաղբյուր համայնքի ղեկավար՝ Ա. Հակոբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լուսաղբյուր համայնք,
գ. Lusaghbyur.lori@mta.gov.am, հեռ. 093-34-47-89

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» դեկտեմբերի 2016 թվականի N 40-Ն

ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2017 – 2021 ԹԹ-Ի ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով.

Լուսաղբյոր համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Լուսաղբյուր համայնքի զարգացման 2017-2021 թթ-ի հնգամյա զարգացման ծրագիրը:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ	դեմ	ձեռնպահ
Գևորգյան Լարիսա			
Դանիելյան Արգամ			
Հակոբյան Վազգեն			
Մադոյան Գարիկ			
Յայլոյան Գագիկ			

Լուսաղբյուր համայնքի ղեկավար՝ Ա. Հակոբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021թթ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց՝ համայնքի ղեկավար՝ - Արամայիս Հակոբյանը
Հաստատվել է համայնքի ավագանու նիստում

Գ.. ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ— 2017 թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է հնգամյա ծրագիրը

1. Համայնքի իրավիճակի գնահատում:
2. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները:
3. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում:
4. Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում:
5. Համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշները:

Հավելված – 1 Համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակա կազմակերպությունների կառուցվածքը:

Հավելված – 2 Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը:

Ի՞ՆՉ Է ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը: Այն մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Լուսաղբյուր (Ալբուլաղ) գյուղը վերաբնակեցվել է 1804թ.-ից հետո: Համայնքի բնակիչները ներգաղթել են հիմնականում Բասենի և Կարսի տարբեր գյուղերից: Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1600-1850մ բարձրության վրա: Գյուղը գտնվում է Փամբակի հովտի արևմտյան ծայրամասում, Մարալ-Դաղ լեռան ստորոտին: Մարալ-Դաղից բխում են բազմաթիվ աղբյուրներ ,որոնցից դեպի արևելք հոսող ջրերը լցվում են Քուռ գետը,իսկ դեպի արևմուտք հոսող ջրերը լցվում են Արաքս գետը: Գյուղը գտնվում է Վանաձոր - Գյումրի մայրուղու վրա : Մարզկենտրոնից 45 կմ դեպի արևմուտք , Սպիտակ քաղաքից 25 կմ դեպի արևմուտք: Այս գյուղով են անցնում Թբիլիսի - Գյումրի երկաթուղին և ավտոճանապարհը: Շրջապատված է սարերով, որի լանջերից բխող բնական ազբյուրներից հոսում է համայնքի խմելու ջուրը, որը մատակարարում է բնակիչության 60-65%-ին:

Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով, ամռանը գյուղում հաճախակի են չորային և երաշտի տարիները:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղի բնակչությունը կազմում է 1073 մարդ, այդ թվում

➢ տղամարդիկ	589
➢ կանայք	484
➢ ժամանակավոր բացակայողներ	62
➢ առանց հաշվառման բնակիչներ	44
➢ Ծխերի թիվը	288
➢ երեխաներ (0 – 7տ)	138
➢ դպրոցական(7 – 17) տ	114
➢ 18 – 62 տարեկան	710
➢ թոշակառուներ	93
➢ հաշմանդամներ	29
➢ «Փարոս» համակարգում հաշվառված ընտանիքներ	108
➢ Արցախյան պատերազմի մասնակիցներ	1
➢ Գրանցված գործազուրկներ	35

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Գյուղը կառավարվում է համայնքի ղեկավարի կողմից, որն ընտրվում է չորս տարին մեկ անգամ: Համայնքի ղեկավարը ստեղծել է աշխատակազմ հետևյալ կառուցվածքով

- ✓ Համայնքի ղեկավար - 1 դրույք
- ✓ Համայնքի ղեկավարի տեղակալ - 1 դրույք
- ✓ 2.1 համայնքային ծառայության առաջատար պաշտ. 1-ին ենթ. համ. ղեկ. աշխատակազմի քարտուղար - 1 դրույք
- ✓ 3.1 համայնքային ծառայության կրտսեր պաշտ. 1-ին ենթ. համ. ղեկ. աշխատակազմի առաջատար մասնագետ -2 դրույք
- ✓ 3.2 համայնքային ծառայության կրտսեր պաշտ. 2-րդ ենթ. համ. ղեկ. աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ – 1 դրույք
- ✓ 3.3 համայնքային ծառայության կրտսեր պաշտ. 3-րդ ենթ. համ. ղեկ. աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ -2 դրույք
- ✓ Վարորդ -1 դրույք
- ✓ Տեխնիկական աշխատող -1 դրույք
- ✓ Հավաքարար - 0.5 դրույք

Աշխատակազմի և ենթակառույցների ամբողջ ապարատը բաղկացած է 11 հոգուց: Համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակառույցների կառուցվածքը բերված է հավելված 1-ում:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ , ՄՇԱԿՈՒՅԹ, ԴՊՐՈՑ

Ընդհանուր միջնակարգ կրթությունն իրականացվում է համայնքի տարածքում գործող միջնակարգ դպրոցում որը կառուցվել է 2000թ-ին և որը կարիք ունի վորանորագման, ունի 103 աշակերտ, Դպրոցն ունի 30 աշխատատեղ որից 24-ը ուսուցիչ,, մեկ ուսուցչին բաժին է ընկնում մոտ 4 աշակերտ: : Վերջին տարիներին պակասել է աշակերտների թիվը որը պայմանավորված է բնակչության արտագաղթով:

Մշակույթի բնագավառում գործում է միայն գրադարան 1 մեկ աշխատողով, համալրված 677 անուն գրքով, որը տեղակայված է վագոն տնակում :
Գյուղը չունի մշակույթի տուն , մարզադահլիճ, մանկապարտեզ, գյուղապետարանի շենք, հանդիսությունների սրահ, գյուղամիջյան ճանապարհները հիմնականում ծածկույթ չունեն:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Առողջապահության համակարգում գործում է բուժ կետ, բուժաշխատողի թիվը _1 բուժքույր որը սպասարկում է 1073 մարդ, հիմնական սպասարկումը կատարվում է հարակից գյուղում և Սպիտակ քաղաքում ,որը իրենից մեծ դժվարություն է ներկայացնում բնակչության նյութապես վատ պայմաններում գտնվելու պատճառով: Բուժ կետը տեղակայված է վագոն տնակում որը 'կարիք ունի վերանորոգման:Այդ իսկ պատճառով Բուժսպասարկումը դեռևս գտնվում է ցածր մակարդակի վրա:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կա 240 բնակելի տուն , 20.000 հազ. քմ. տարածքով: Բնակարանով անապահով և կարիքավոր ընտանիքների թիվը 96-ից ավել է, որը տարեց տարի աճում է: Կան կիսակառույց 27 և 15 վթարային բնակարաններ, որոնք, տնտեսական վատ վիճակից ելնելով, չեն կառուցվում կամ վերանորոգվում:

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի հողային տարածքը կազմում է շուրջ 2927.80 հա , որից գյուղատնտեսական նշանակության հողեր 2485.72 հա

- Վարելահողեր -- 606.76 հա
- Խոտհարք – 31.55 հա
- Արոտավայրեր – 1695.16հա
- Հանքավայրային հողեր - 152.25հա
- Գերեզմանոց – 2.5 հա
- Տնամերձ հողեր – 82.00հա
- բնապահպանական առողջապահական, հանգստավայրերի , մարզական և պատմա-մշակույթային նշ. հողեր – 4.60 հա
- Բնակելի շինությունների տակ հողեր – 51.00հա
- մեկ հողաբաժնի չափը – 1.20հա
- Անտառ -- 260.15հա
- Արդյունաբերության, Տրանսպորտի,կապի պաշտպանության և այլ նշ.հողեր - 95.28հա, -

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Վարելահողերի մի մասը չի հերկվում համայնքում գյուղ տեխնիկայի բացակայության պատճառով, որն էլ բերում է նրան որ վարելահողերի մի մասը աստիճանաբար վերածվում է խոտհարկի:Գյուղտեխնիկայի բացակայության պատճառով դժվարություններ է առաջանում նաև բերքահավաքի ճիշտ և ժամանակին կազմակերպելու գործում:

Ոռոգման ջրի սակավության պատճառով համայնքը դժվարանում է իրականացել ոռոգելի տարածքների նորմալ ջրամատակարարումը: Միայն հնարավոր է ոռոգել հողատարածքների 40-50%: Մնացած հողատարածքներում բնակչությունը հիմնականում զբաղվում է ցորենի, գարու, և բանջարա-բոստանային կուլտուրաների արտադրությամբ կամ խոտի տնտեսությամբ: Այս արտադրությունը կախված է բնության քմահաճույքից: Անձրևային տարիներին որոշ չափով դեռ կարելի է բերք հավաքել, իսկ երաշտի տարիներին գյուղացին կորցնում է բերքի 60-70%-ը:

Անասնապահությամբ զբաղվողներն արտադրում են կաթ, միս, բուրդ, ձու, մեղր: Երաշտի տարիներին անասնապահության բնագավառում նույնպես մեծ դժվարություններ են առաջանում: Հիմնականում տարածվում են մի շարք սուր վարակիչ հիվանդություններ, ինչպիսիք են՝դաբաղ,խշխշուկ և այլն:

Դժվարություններ են առաջանում խոտի և խտացված կերի անբավարարվածության պատճառով: Դժվարանում է անասունների մսուրային շրջանի կազմակերպումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Աշխատուժի առկայությունը
- Աշխարհագրական դիրքը՝ միջազգային նշանակության կենտրոնական ճանապարհ, երկաթուղի,
- Հողային և ջրային ռեսուրսների բավարար առկայություն
- գյուղատնտեսության համար անհրաժեշտ մասնագետ կադրերի առկայությունը
- Դպրոցը ապահովված է առաջնակարգ մասնագետներով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Անմխիթար վիճակում են գտնվում խմելու ջրի,ոռոգման ջրի ցանցերը
- Ճրատարների և գյուղամիջյան ու դաշտային ճանապարհների անմխիթար վիճակը.
- Բնակարանային շինարարությունը կանգնած է, կան կիսակառույց բնակարաններ
- Մեծանում է արտագնա աշխատանքի մեկնողների թիվը.
- Գործազրկություն.
- Հողերի անջրդիության պատճառով գյուղացու եկամուտների նվազում.
- Սոցիալապես ապահով ընտանիքների սակավություն
- Աղետի գոտի հասկացողություն իր ամբողջ հետևանքներով
- Համայնքում գյուղ տեխնիկայի բացակայություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ֆերմերային տնտեսությունների ստեղծում.
- Գյուղատնտեսության զարգացում, հատկապես կորնգանի սերմնաբուծության զարգացում
- Չոգտագործվող արոտավայրերի նպատակային շահագործում, անասնագլխաքանակի ավելացում
- Կարտոֆիլի- հացահատիկի վերամշակման արտադրամասի ստեղծում
- Անասնապահական մթերքների վերամշակման արտադրամասի ստեղծում (մսամթերք, կաթնամթերք):

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Խմելու ջրի և ոռոգման համակարգի անմխիթար վիճակը
- Գյուղատնտեսական նշանակության տեխնիկայի բացակայությունը
- Ճրամբարների բացակայությունը
- Հեղեղատարների անմխիթար վիճակը
- Հարկային մուտքերի գանձման դժվարությունները
- Արտագաղթ
- Սիստեմատիկ տարերային աղետների վտանգը(կարկուտ,հեղեղում, երկրաշարժ):

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Համայնքի ղեկավարությունը հաշվի առնելով բնակչության պահանջները , սահմանում է հետևյալ ռազմավարությունը՝ գյուղը դարձնել բարեկարգ, բարելավել համայնքի բնակչության սոցիալ – տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, օժանդակել գյուղմթերքների արտադրության ավելացմանը, ֆերմերային տնտեսությունների ստեղծմանը, չօգտագործվող արոտավայրերի առավել նպատակային օգտագործմանը:
Առաջիկա 4 տարիներին համայնքի հիմնական նպատակներն ու խնդիրներն են՝

- Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին բնակարանով ապահովելը:
- Ստեղծել գյուղատնտեսական նշանակության մեքենաների հավաքակայան:
- Զարգացնել գյուղատնտեսությունն ու անասնապահությունը:
- Համայնքն ապահովել շուրջօրյա խմելու ջրով:
- Կազմակերպել համայնքի բնակչության մշակութային և սպորտային կյանքը
- Բարեկարգել գյուղամիջյան և դաշտային ճանապարհները
- Ոռոգման ներքին ցանցի կառուցում:
- Սելավատար առուների կառուցում:

3.ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՈՒՄ
ԾՐԱԳԻՐ 1

«Ջաջուռի» թունելից մինչև Լուսաղբյուր համայնքի 5 կմ երկարությամբ խմելու ջրագծի և ջրամբարի կառուցում:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակն է

Համայնքի բնակչությանը ապահովել շուրջօրյա ջրամատակարարումով:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ

- համագործակցելով Լոռու մարզպետի և Հայաստանում գործող սոցիալական և ֆինանսական կազմակերպությունների հետ կազմելով ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը,
- ապահովել համայնքային ներդրումը,

- ձեռք բերել ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներ,

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Իրականացնելով այս ծրագիրը, գյուղը 80%-ով կապահովվի խմելու ջրով:Կբարելավվի գյուղի ազգաբնակչության սոցիալ-տնտեսական վիճակը:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Նախնական մոտավոր հաշվարկներով 5կմ երկարությամբ ջրագծերի և ջրամբարի կառուցման աշխատանքների արժեքը կկազմի մոտ 35 մլն << դրամ:

ԾՐԱԳԻՐ 2
ՀԱՄԱՅՆՔԻ ՈՌԱԳՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ԵՎ ՋՐԱՄԲԱՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

<u>Ծրագրի հիմնական նպատակն է</u>

- ապահովել համայնքի ջրամբարից ներքև գտնվող սեփականաշնորհված 200հա. հողամասերի անխափան ոռոգումը,
- բարձրացնել գյուղ. նշանակության հողերի բերքատվությունը, ավելացնել գյուղմթերքների արտադրությունը, մասնավորապես կարտոֆիլի, կաղամբի և բանջարաբոստանային կուլտուրաների:

<u>Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ</u>

- հիմնախնդիրը բարձրացնել << կառավարության առջև ծրագիրը ֆինանսավորելու և իրագործելու համար,
- ապահովել համայնքի կողմից պահանջվող ներդրումը,
- կազմել ծրագրի նախագծա-նախահաշվային փաստաթղթերը,
- Ներքին ոռոգման ցանցը և ջրամբարը հանձնել շահագործման, համայնքի գյուղ. տնտեսություններին մատակարարել մշտական ոռոգման ջուր:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- Իրականացնելով այս ծրագիրը, համայնքի 200 հա սեփականաշնորհված հողերը կապահովվեն ոռոգման ջրով:

ԾՐԱԳԻՐ 3
ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵԼԱՎԱՊԱՏ ԱՌՈՒՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Համայնքի սելավապատ առուների կառուցում:Երկար ժամանակ սելավատար առուների չմաքրվելու հետևանքով. տեղացած անձրևներից առաջացած ջրհեղեղը լցվում է բնակիչների բնակարանները և ամբողջությամբ հեղեղում է նրանց տնամերձ հողատարածքները: Հաշվի առնելով, որ գարնան ձնհալն ու անձրևները կարող են արդեն իսկ թափանցել և վնասել նշված տարածքները, այդ իսկ պատճառով, ընդառաջելով և հաշվի առնելով բնակչության խնդրանքը, անհապաղ իրականացնել սելավապատ առուների պատնեշների կառուցումը:

Ծրագրի հիմնական նպատակն է

- Ապահովել բնակչության անվտանգությունը՝ առաջացած ջրհեղեղից պաշտպանելու համար,
- հետագա աղետներից պաշտպանել գյուղատնտեսական նշանակության հողատարածքները,ոռոգման ջրատարները,ինչպես նաև մի շարք շենքեր և շինություններ:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ

- Համայնքի առաջնահերթ հիմնախնդիրներից մեկը լուծելու համար հարց բարձրացնել Լոռու մարզպետի, Հայաստանում գործող մի շարք հասարակական և ֆինանսական կազմակերպությունների առաջ ծրագիրը ֆինանսավորելու և իրագործելու համար,
- ապահովել համայնքի կողմից պահանջվող ներդրումը,
- կազմել ծրագրի նախագծա-նախահաշվային փաստաթղթերը,

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- Կասեցնել հետագա աղետները,որի վնասները նախկինում կազմել են շուրջ 5 միլիոն դրամ,
- իրականացնել այս ծրագիրը՝ ափամերձ 40հա տարածքներ պաշտպանելով հետագա հեղեղումներից և բարձրացնել հողերի նորմալ մշակումն ու բերրիությունը:

ԾՐԱԳԻՐ 4
ՀԱՄԱՅՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Զրհեղեղի հետևանքներից վնասվել էր համայնքի գյուղամիջյան և դաշտային 14կմ երկարությամբ ճանապարհ: Հատկապես անհրաժեշտություն է առաջանում առաջնահերթ նորոգել դաշտամիջյան ճանապարհները՝ ստեղծելով հնարավոր պայմաններ գյուղատնտեսական աշխատանքները դաշտերում իրականացնելու համար:

Ծրագրի հիմնական նպատակն է

- ապահովել տրանսպորտային բոլոր միջոցների անխափան երթևեկություն տարվա բոլոր եղանակներին,
- վերացնել փողոցների ջրափոսերը և ճանապարհներին վտանգ սպառնացող հատվածները:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ

- համագործակցելով Լոռու մարզպետի և Հայաստանում գործող սոցիալական և ֆինանսական կազմակերպությունների հետ կազմելով ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը,
- ապահովել համայնքային ներդրումը,

ԾՐԱԳԻՐ 5
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Համայնքում համայնքային կենտրոն չլինելու պատճառով համայնքում անկում է ապրում մշակութային և սպորտային կյանքը: Համայնքում կան բազմաթիվ շնորհալի երիտասարդներ որոնք նորմալ պայմանների բացակայության պատճառով չեն կարողանում զարգացնել իրենց բնատուր ունակությունները:

Ծրագրի հիմնական նպատակն է

- Համայնքում զարգացնել գիտական, մշակութային և սպորտային կյանքը
- Վերացնել երիտասարդության մոտ անգործությունից առաջացող բոլոր վատ երևույթները
- մշակույթի տան դահլիճը տրամադրել հարսանյաց արարողությունների, ավագանու նիստերի,համայնքի ընդհանուր ժողովների անցկացման համար,
- տրամադրել խաղասենյակներ շախմատի, նարդու և այլ խաղերի համար

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ

- համագործակցելով Լոռու մարզպետի և Հայաստանում գործող սոցիալական և ֆինանսական կազմակերպությունների հետ

կազմելով ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը,
ապահովել համայնքային ներդրումը,

ԾՐԱԳԻՐ 6

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆԻ ՍՏԵՂԾՈՒՄ

Գյուղում գյուղ տեխնիկա չլինելու պատճառով համայնքի վարելահողերի մեծ մասը չի հերկվում աստիճանաբար վերածվում է խոտհարկի և խոպան հողերի ,որը բերում է գյուղատնտեսության անկման:Հիմնականում օգտվում են հարևան գյուղերի գյուղ տեխնիկայից

<u>Ծրագրի հիմնական նպատակն է</u>

-Համայնքում ստեղծել գյուղ. տեխնիկայի կայան
-Զարգացնել գյուղատնտեսությունը և անասնապահությունը
-Ապահովել ցանքսի և բերքահավաքի ժամանակին կազմակերպումը
-Նպատակային և լիակատար օգտագործել սեփականաշնորհված հողերը
- Ճիշտ կազմակերպել ցանքաշրջանառությունը

<u>Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ</u>

- համագործակցելով Լոռու մարզպետի և Հայաստանում գործող սոցիալական և ֆինանսական կազմակերպությունների հետ կազմելով ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը,
- ապահովել համայնքային ներդրումը,

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքում կոնկրետ ծրագիր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը: Լոռու մարզի Լուսաղբյուր համայնքում այն ունի հետևյալ պատկերը:

(հազ. դրամ)

	Եկամուտի տեսակը	2017թ նախա-տեսված	2018թ կանխա-տեսում	2019թ կանխա-տեսում	2020 Կանխա-տեսում	2021 Կանխա-տեսում
	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ	17806.7	18877.3	18805.8	18840.8	18850.9
Ա	Հարկային եկամուտներ	4102.0	4111.0	4131.0	4136.0	4156.0
1.	Հողի հարկ	3336.0	3336.0	3336.0	3336.0	3336.0
2.	Գույքահարկ	766.0	775.0	795.0	800.0	820.0
3.	Եկամտահարկ	-	-	-	-	-
4.	Այլ հարկ. եկամուտներ	-	-	-	-	-
Բ	Տուրքեր	78	78	78	78	78
1.	Պետական տուրքեր	-	-	-	-	-
2.	Տեղական տուրքեր	78	78	78	78	78
Գ	Ոչ հարկ. եկամուտներ	571.4	608.7	637.0	637.3	638.6
1.	Համայնքի սեփ. հանդիսացող վարձակալ. հողեր	433.0	433.5	440.2	440.2	440.2
2.	Գույքի վարձավճարներ	-	-	-	-	-
3.	Տեղական վճարներ	52.5	52.0	53.0	53.0	54.0
4	Եկամուտներ կապ. գործ.	-	-	-	-	-
5	Գույքի օտարումից ստացված եկամուտներ	1245.7	1250.4	1255.6	1255.6	1255.6
Դ	Պաշտոնական տրանսֆերտներ, դոտացիա	12000.0	12100.0	12500.0	13500.0	14500.0
Ե	Սուբվենցիա	--	–	–	-	-
Զ	Տարեսկզբի ազատ մնացորդ	–	–	–	-	-

5.ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

<<	Ցուցանիշներ	Չափի միավոր	2017թ կանխ.	2018թ կանխ.	2019թ կանխ.	2020 կանխ.	2021 կանխ.
	1	2	4	5	6	7	8
1	Համայնքի տարածքը	հա	2927.80	2927.80	2927.80	2927.80	2927.80
2	Բնակչության թիվը	մարդ	1095	1110	1130	1140	1145
3	Ծնունդը	մարդ	20	20	22	22	25
4	Մահացությունը	մարդ	10	8	7		
5	Աշխ. ռեսուրսները, այդ թվում	մարդ	790	797	804	808	813
	ա)զբաղվածները ըստ տնտեսության ճյուղերի	մարդ	49	50	52	55	57
6	Գործազրկության մակարդակ	%	49	47	48	48	49
7	Առևտրի և հասարակական սննդի օբյեկտների թիվը	հատ	3	3	3	3	3
8	Պահուստային հողեր	հա	39	39	39	39	39
9	Պահուստային հողերի օգտագործման մակարդակ	%	80	80	80	80	80
10	Խմելու ջրի ներհամայնքային ցանցի երկարությունը	կմ	14	14	14	14	14
11	Ներհամայնքային ոռոգման ցանցի երկարությունը	կմ	12	12	12	12	12
12	Ոռոգման համակարգի տակ ընկած հողեր	հա	120	120	120	120	120
13	Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկար - ն	կմ	18	18	18	18	18
14	Չբարեկարգված փողոցների և ճանապարհների երկար - ը	կմ	6	7	7	7	7
15	Մասնավոր բնակ. ֆոնդ	հազ.քմ	130.2	150.2	150.2	150.2	150.2
16	Բնակ կարիքավոր ընտանիքների թիվը	հատ	47	37	37	37	37
17	Մեկ շնչին ընկնող ջրի սպառումը	լ / օր	70	70	70	70	70
18	Ջրի կորուստները ցանցում	%	45	45	50	50	50
19	Սովորողների թիվը հանրակրթ. դպրոցում	մարդ	103	103	103	110	115
20	Երեխաների թիվը մանկ.- մս.	մարդ	-	-	-	-	-
21	Գյուղապետարանի և ենթակառուցվածքների աշխատողների թիվը	մարդ	10	10	10	10	10

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

1. Գյուղատնտեսական տնտեսությունների թիվը – 288, այդ թվում
   - ա. անհատական տնտեսություն – 288
   - բ. կոլեկտիվ տնտեսություն -- 1
   - գ. պետական տնտեսություն -- 0
2. Գյուղ. արտադրանքի հիմնական տեսակների արտադրությունը. g
   - ա. ցորեն – 3380 ցենտներ
   - բ. գարի – 1850
   - գ.կարտոֆիլ – 5360
   - դ. կաղամբ - 400
   - ե. բանջարաբոստ. կուլտ. - 1.8
   - զ. կաթ – 372
   - է.միս -- 2000
   - ը. բուրդ -- 58
   - է. ձու – 225000հատ
   - ժ. մեղր – 50g
3. Ցանքատարածությունները –
   - ա. հացահատիկ – 140հա
   - բ. կարտոֆիլ – 57
   - գ. բանջարաբոստ. կուլտ. – 6
   - դ. կաղամբ - 3
   - ե. առվույտ – 5
   - զ. կորնգան –
4. Անասնագլխաքանակը, հատ
   - ա. խոշոր եղջեր. անասուններ – 473 գլուխ
   - այդ թվում՝ կովեր – 314
   - բ. մանր եղջեր. անասուններ – 371
   - այդ թվում՝ մայրեր -- 219
   - գ. խոզեր – 39
   - այդ թվում՝ մայրեր – 10
   - դ. թռչուններ՝ – 667թև
   - այդ թվում հավեր՝ -- 611
   - ե. մեղվաընտանիքներ՝ -- 290 փեթակ
2. Գյուղատնտեսական մեքենաների և գործիքների քանակը, հատ

այդ թվում՝

ա. համայնքի սեփականության

թրթուրավոր տրակտոր՝	-- 0
անիվավոր տրակտոր՝	-- 0
հացահատիկային կոմբայն	– 0
բեռն. ավտո. տարբեր մակնիշի	– 0
տրակտորային կցասայլեր	– 0
գութաններ	– 0
կուլտիվատորներ	– 0
շարքացաններ	– 0

բ. մասնավոր սեփականության

թրթուրավոր տրակտոր՝	-- 4
անիվավոր տրակտոր՝	-- 8
հացահատիկային կոմբայն	– 2
բեռն. ավտո. տարբեր մակնիշի	-30
տրակտորային կցասայլեր	– 2
գութաններ	– 4
կուլտիվատորներ	– 4
շարքացաններ	– 2
խոտ հակավորող մեքենաներ	– 1
կերամանրիչ	– 0

ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ